ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Սվթ փետրվարի 13-ին ԴԱ Նիստերի դահլիճում կայացավ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների կոնֆերանսը։

«Գիտողություններ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների շուրջը» (15—13-րդ դդ. մ. թ. ա.) թեմայով առաջին հանդես եկավ կրտսեր գիտ. աշխատող Լ. Բարսեղյանը։

Զեկուցողն ընտրել էր քիչ ուսումնասիրված մի բնագավառ. զեկուցման մեջ վերլուծվեց Խայասայի, Ալշեի և Տիրիայի թագավորների և նրանց գործունեության մասին խեթական աղբյուրներում պահպանված տեղեկությունները, ինչպես և ցեղային ավագանու գոյության և նրա ֆունկցիաների հարցերը։ Զուգահեռներ անցկացնելով խեթերի հին թագավորության շրջանի (16—16-րդ դդ. մ. թ. ա.) նույնանման փաստերի հետ, Լ. Բարսեղյանը մանրամասն կանգ առավ Խայասայում թագավորների կողքին գոյություն ունեցող և ցեղի ու տոհմի կյանքում մեծ տեղ նվաճած, արտոնություններով և իրավունքներով օժտված ցեղային ավագանու կամ ավագների խորհրդի իրավունքների և դերի վրա։

Զեկուցողն այնուհետև խոսեց ստրկական աշխատանքի մասին, կանգ առնելով խեթական աղբյուրներում հաճախակի հանդիպող Խայասա-Ացցի, Ալշեն և Իշուան երկրներից փախած ստրուկների, ինչպես նաև Խայաշա տարված խեթական գերիների իրավական վիճակի վրա՝ աշխատելով ապացուցել, որ նրանց մի մասը ազատվում էր ստրուկ լինելուց և բանակում ծառայում որպես զինվոր, իսկ մյուս մասն՝ ամրացվում էր հողին։

Լ. Բարսեղյանն անդրադարձավ նաև բնտանիքի և ամուսնության հարցերին։ Նշեց, որ գնմամբ ամուսնություններ լայն տարածում ուներ նաև միջնադարյան Հայաստանում։

«Ուրարտական նորահայտ դամբարան Երևանում» հաղորդումով ելույթ ունեցավ լարորանտ Հ. Իսրայելյանը։ Նա հաղորդեց 1961 թ. ամռանը Մոսկովյան փողոցի (Թումանյանի տունթանգարանի մոտ) շինարարական աշխատանքների ժամանակ պատահականորեն բացված մի դամբարանի մասին։ Դամբարանը մասամբ ավերված է եղել և խեցեղենի մեծ մասը ջարդված։ Դամբարանում գտնվել են երկու տիպի խեցեղեն՝ ուրարտականի համար բնորոշ կարմիր գույնի և տեղական սև խեցեղեն, երկու կլոր բրոնզե ապարանջանների մասեր՝ մեկը գծակարդերով։ Մանրամասն նկարագրելով հայտնաբերված կավամանները, Հ. Իսրայելյանը ուրարտական կարմիր խեցեղենը համեմատեց Կարմիր Բլուրից, Արինբերդից, Արմավիրից, Աստղաձորից հայտնաբերվածների հետ, իսկ տեղական սև խեցեղենի համար՝ Կարմիր Բլուրի նախաուրարտական շերտից, Արինբերդից, Խրտանոցից, Գելովինոյից, Կիրովականից, Լծվարից հայտնաբերվածների հետ և հենվելով այս անալոգիաների վրա, նորահայտ դամբարանը թվագրեց ուրարտական ժամանակաշրջանով (8-րդ դար)։

«Ուրարտական դարաշրջանի դամբարանի ասկայությունը հին Երևանի հյուսիսային թաղամասում թույլ է տալիս ենթադրելու, որ այստեղից ոչ հեռու եղել է նաև բնակավայր՝ ժամանակակից Արին բերդին։

Բանահյուսության սեկտորի կրտսեր գիտաշխատող Վ. Ավագյանը հանդես եկավ «Մուսա լեռան հայ ժողովրդական բանահյուսությունը» թեմայով։ Բանահյուսական նյութերը նա գրի է առել Ավեդիսի շրջանի այն բնակիչներից, որոնք փրկվել և ներկայումս ապրում են Շահումյանի, Հոկտեմբերյանի և Էջմիածնի շրջաններում։ Նյութերը գրի են առված բարբառագիտական սկզբունքներով։ Վ. Ավագյանի գրի առած նյութերի մեջ կան և վիպական և քնարական ստեղծագործություններ։ Զեկուցողը նշեց, որ էպիկական ժանրի ստեղծագործություններում մեծ տեղ են գրավում հրաշապատում հերիաթները, որոնցում մեծ դեր են խաղացել գիրն ու գիրը, մարդկանց ու կենդանիների լեզուների իմացությունը, բնության տարերային ուժերի սանձահարման և այդ ուժերը մարդու կամքին ենթարկելու մասին խրատական դաստիարակչական հերիաթները։ Զեկուցողը վերլուծեց նաև ավեդահայերի խորիմաստ առածներն ու ասացվածքները, ինչպես օրհնանքների և անեծքների, բազմաթիվ հանելուկների ու խաղիկների վրա, վերջում նշելով, որ «Ավեդահայերի ժողովրդական բանահյուսության մեջ բերված նմուշները գաղափար են տալիս մեզ ժողովրդի այդ հատվածի հասարակական կեցության, պայմանների, գիտակցության ու մտածողության ձևերի, ինչպես նաև նրանց գեղարվեստական ճաշակի համար»։

Կոնֆերանսի վերջում «Զգեստավորումը միջնադարյան Հայաստանում» թեմայով ելույթ ունեցավ ինստիտուտի Ազգագրության բաժնի կրտսեր գիտաշխատող Է. Պետրոսյանը։ Նա նշեց, որ մարմնի, գնմբի ներկելը և զգեստավորումը սկիզբ է առել դեռևս հնագույն ժամա-

նակներից՝ կապված կրոնական արարողությունների հետ։ Զեկուցողը մի շարք օրինակներ բերեց ներկայի տարբեր հետամնաց, զարգացման տարբեր աստիճաններում գտնվող ցեղերի և ժողովուրդների արարողություններից՝ ավստրալիացիների, Ամերիկյան հնդիկների, Մելանեզիայի ցեղերի և այլն։ Է. Պետրոսյանը հատկապես կանգ առավ միջնադարյան Հայաստանում ներկվելու և զգեստավորման վրա, փաստեր բերելով Խորենացու մոտ պահպանված տոտեմացած երգպարի գոյության վերաբերյալ (յերգս ցցոց և պարուց)։ Նշելով միջնադարում թատերական տերմինների գոյության փաստը և կանգ առնելով հատկապես հայկական ձեռագրերի մանրանկարներում պահպանված թատերականացված ռեալ և ֆանտաստիկ կերպարների վրա, նա ենթադրում է, որ այդ տրադիցիան ժառանգված է մեզ շհասած հեթանոսական երգարանք, բանավանից։ Է. Պետրոսյանն իր ելույթը եզրափակեց ասելով, որ վերը նշված փաստերը վառ ապացուցում են այն, որ թատերականացման էլեմենտները լայն տարածում են ունեցել ոչ միայն հեթանոսական շրջանում, այլ նաև միջնադարյան քրիստոնեական Հայաստանում։

Կոնֆերանսը եզրափակեց պրոֆեսոր Բ. Առաքելյանը՝ նշելով լսված զեկուցումների հաջողությունները և թերությունները, միաժամանակ շեշտելով ապագայում նման աշխատանքների ծավալման անհրաժեշտությունը։

Է. ԽԱՆԶԱԴՅԱՆ